ՀՈԳԵԻՈՐ ԸՆԹԵՐՑՈՒՍՆԵՐ

ԱՐՓԻՆԵ ՉԱՆԹԻԿՅԱՆ

ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ...

Աշխարհի արարման, կյանքի սկզբնավորման, Աստծո գոյության հիմնախնդիրները մշտապես եղել են գիտության, փիլիսոփայության, աստվածաբանության քննարկման առարկան: Կյանքի ծագման, կենդանի էակների առաջացման խնդրի պարզաբանումն այսօր եւս մեծ կարեւորություն ունի. գիտությունը, փիլիսոփայությունը վերջնական եւ սպառիչ պատասխան չեն տվել այս հարցին. մշակվել են բնագիտական, բնագիտաքիմիական, բնապատմական տեսություններ, որոնք, այնուամենայնիվ, թերի են ու խոցելի: Աստծո գոյության, աշխարհի՝ տիեզերական Մտքի կողմից արարված լինելու մի հետաքրքիր փորձ է նաեւ Շահան Պերպերյանի «Բնազանցություն» աշխատությունը:

Շահան Պերպերյանը, քննարկելով Արենիուսի՝ այսպես կոչված «կենսահատիկներին» վերաբերող, ինչպես նաեւ «ինքնաբեր ծնունդի» (Generation Spontane) մասին տեսությունները, հանգամանորեն մերժում է դրանք[1]: Նա քննարկում է նաեւ «Բարեշրջական» (էվոլյուցիոն) տեսությունը եւ նկատում, որ վերջինս ամենեւին էլ չի հակադրվում աստվածաբանությանը: Ըստ Շահան Պերպերյանի՝ այս տեսությունը բացահայտում է կենսաձեւերի աստիճանական զարգացումը եւ հաստատում, որ բարձրագույն էակը մարդն է. այն ոչ թե հերքում, այլ հիմնավորում է արարչագործության աստվածաշնչյան ավանդությունը:

Կրեացիոնիզմը (արարչագործության տեսություն) մշտապես ունեցել է իր հեղինակավոր պաշտպանները եւ արտահայտել կյանքի առաջացման մասին քրիստոնեական դիրքորոշումը, սակայն նկատի ունենալով գիտական նորագույն նվաճումներն ու առաջընթացը՝ այն պետք է ունենա այլ շեշտադրում եւ առավել խորությամբ մեկնաբանվի:

Այս աշխատության մեջ հերքվում է կյանքի սկզբնավորման բնագիտաքիմիական տեսությունը. իրերի աշխարհը չի կարող բացատրվել միայն նյութա-

1 Տես **Շահան Պէրպէրեան**, Բնազանցութիւն, Պէյրութ, 1978, էջ 66 (այսուհետեւ գրքից հղումը շարադրանքում՝ փակագծի մեջ):

կան փարրերի հատկություններով այնպես, ինչպես մեքենայի առկայությունը հնարավոր չէ բացատրել այն կազմող մասերով, եւ անհրաժեշտաբար պետք է ընդունել այդ մեքենան ստեղծող գյուտարարի գոյությունը (էջ 64): Այսինքն՝ հեղինակն ընդգծում է իրերի աշխարհի արարիչ Կեցության գոյության անհրաժեշտությունը:

Գրքի «Հոգեկանություն» վերնագրով բաժնում քննարկվում են հոգեւոր երեւույթները, տարբերակվում են այս խնդրին վերաբերող մոտեցումները. նյութապաշտական (մատերիալիստական) մոտեցման համաձայն՝ հոգեկան երեւույթները պարզապես ուղեղի գործունեության արդյունք են եւ պայմանավորված են մարդու մարմնական (ֆիզիկական) կարողություններով: Այս մոտեցման կողմնակիցները բոլոր երեւույթները համարում են նյութից ածանցյալ: Նրանց պնդմամբ՝ գիտությունը հիմնվում է փորձի, փաստերի վրա, հետեւաբար չի կարող ընդունել գոյության այնպիսի ձեւ, որը դուրս է դիտողականության սահմաններից (էջ 70). հոգու գոյությունը ոչ թե փաստ, այլ ենթադրություն է: Շահան Պերպերյանը հակադարձում է այս տեսակետին եւ նշում, որ զգայարաններով ընկալված տվյալներից ու երեւույթներից զատ, գոյություն ունեն նաեւ հոգեւոր ներքին իրողություններ, որոնք նյութեղեն չեն եւ մարմնի մեջ չեն հայտնաբերվում: Իսկ հոգեպաշտական տեսությունն ընդունում է Ուժի (Energie) գոյությունը, որի տարրերի խտացումից գոյանում է նյութը: Այս տեսության պաշտպանների կարծիքով՝ գիտությունն այսօր առանձնացնում է ուժի տեսակներ, ուստի կարելի է ընդունել նաեւ հոգեկան ուժի գոյությունը, որն առաջացնում է մտածում, գիտակցում, խորհում. «Հոգին ուժ մըն է եւ այնպիսի ուժ մը որ իրր արդիւնք կ՚ունենայ մտածումը, զգացումը եւ այլն. այսինքն՝ հոգեկան ուժ մը կայ՝ նիւթականէն տարբեր ու նիւթականին վրայ ազդող, իրեն յատուկ երեւոյթներով» (էջ 77):

Շահան Պերպերյանը տարբերակում է «էության» երեք տեսակ.

1. Ներունակ (պոտենցիալ) էություն, որը, անշուշտ, դեռեւս գոյ չէ, գոյությամբ օժտված չէ, սակայն կարող է գոյություն ունենալ, իրողություն դառնալ:

2. Իրական, արդեն իսկ գոյությամբ օժտված էություն, որը գոյություն ունեցողը, գոյավորն է: Երբ ասում ենք «էակ», հասկանում ենք այն, ինչ օժտված է «էությամբ» եւ «գոյությամբ»: «Էությունը» անհրաժեշտորեն ենթադրում է «գոյություն», որն էլ իր հերթին սահմանափակվում է որոշակի «էությամբ»:

3. Բարձրագույն, բացարձակ Է-ն կամ անհրաժեշտ Կեցությունն իր գոյությամբ կախված չէ արտաքին որեւէ պայմանից կամ երեւույթից: Բարձրագույն Կեցությունը միակ բացարձակ իրականությունն է, որից գոյաբանական կախվածության մեջ է գտնվում իրերի աշխարհը: Հավիտենական Է-ի մեջ չկա «էության» ու «գոյության» տարանջատում, այլ այդ երկուսն ի սկզբանե նույնական են, եւ Նրա իսկությունն արդեն իսկ գոյություն ունենալն է (էջ 88): Աստվածային կեցությունը բացարձակ տարբեր է իրերի աշխարհի կեցությունից, քանզի բոլոր վերջավոր, արարված իրերը գոյություն են ստացել հենց այս անսկիզբ,

անվախճան եւ բացարձակ կատարյալ Ոգեկան կեցությունից (էջ 91): Արարիչը միության բարձրագույն եւ անսպեղծ Ձեւն է:

Շահան Պերպերյանն առանձնացնում է «հնարավորությունը» եւ «գործողությունը», «նյութն» ու «ձեւը», «էությունը» (essentia) եւ «գոյությունը» (existentia): Վերջավոր աշխարհում արարածներն ու իրերը նյութի եւ որոշակի ձեւի միասնություն են. նյութը եւ ձեւը իրարից անջատ գոյություն չունեն, միայն դրանց միավորումը, ամբողջությունն է ձեւավորում որոշակի գոյ (էջ 104): Հեղինակն անդրադառնում է նաեւ նյութի եւ ձեւի փոխհարաբերությունը ներկայացնող հիլեմորֆիզմի կամ հյուլեձեւության տեսությանը, որի համաձայն՝ «էությունը» նյութի եւ ձեւի միասնությունն է: «Էության» հարաբերությամբ նյութն ու ձեւը համարժեք են «հնարավորությանը» եւ «իրականությանը». «նյութ» ասելով՝ ենթադրվում է ներզոր էություն, իսկ «ձեւ»՝ իրական դարձած էություն: Հիլեմորֆիզմը Շահան Պերպերյանն անվանում է նյութաձեւության տեսություն (էջ 104):

Փիլիսոփայության եւ աստվածաբանության մեջ կարեւոր տեղ է զբաղեցնում մարդաբանությունը (անթրոպոլոգիան): Մարդկային՝ գիտակցված գոյությունը, համարվում է գոյության առավել կատարյալ ձեւ, քանի որ մարդը բանական էակ է եւ գիտակցում է ոչ միայն իր, այլ նաեւ իրենից դուրս գտնվող առարկայական աշխարհի գոյավոր լինելը: Այս տեսանկյունից մարդը բացառիկ էակ է. «Մա՛րդն է, որ կ՚ապրի գոյութիւնը եւ ընդհանուր իմաստով գոյութիւն կու տայ աշխարհին» (էջ 108): Ինչպես Սարտրը, այնպես եւ Շահան Պերպերյանն ընդգծում են, որ լինելով ազատ կամքով օժտված էակ՝ մարդն է գոյության ընթացքում կերտում իր էությունը, իսկությունը. «...իւրաքանչիւր մարդ, որովհետեւ ազատ է իր գործերուն մէջ, պատասխանատու է այս աշխարհէն իր իբրեւ ինչ դուրս գալուն» (էջ 109): Մարդը՝ արարչագործության պսակը, կարող է միայն արդեն իսկ ստեղծված նյութին նոր տեսք, ձեւ հաղորդել, ազդեցություն գործել դրա վրա: Բացարձակ իմաստով «ստեղծագործության» դեպքում արարվում են եւ՛ նյութը, եւ՛ ձեւը. այդ ստեղծագործության հեղինակը Արարիչն է: Ողջ գոյավորն ունի իր լինելության նպատակը. աշխարհը, իրերն ու երեւույթներն իրենց գոյությամբ ձգտում են որոշակի նպատակի: Նյութական առարկայական (օբյեկտիվ) աշխարհը գոյություն ունի մարդուց անկախ, նրանից դուրս, սակայն միեւնույն ժամանակ գոյություն ունեն նաեւ ոչ նյութական բնույթ ունեցող հոգին ու հոգեկան երեւույթները, որոնց գոյությունը նույնքան իրական է, որքան իրերի աշխարհինը:

Շահան Պերպերյանն իրավամբ նկատում է, որ մարդ արարածը մշտապես ուղղակի կամ անուղղակի կերպով փնտրում է Աստծո գոյությունը հիմնավորող փաստարկներ: Գոյություն ունի՞ արդյոք այն կատարյալ, բարձրագույն Է-ն, որը արարել է իրերի աշխարհը, գոյություն ունի ժամանակից եւ տարածությունից դուրս, անդրանցական (տրանսցենդենտ) է ու հավերժական: Այս հարցի պատասխանը կարող ենք գտնել՝ դիտարկելով տիեզերքը, իրերի աշխարհը, մեզ ընկալելի եւ հասկանալի բնական երեւույթներն ու օրենքները: Առարկայական

իրականությունը կարծես մեզ «սփիպում» է մտածել աստվածային կեցության մասին եւ անդրանցնել փիեզերքը:

Դեռեւս մարդկության պատմության շատ վաղ շրջանից գոյություն են ունեցել կրոնական տարբեր հավատալիքներ, համակարգեր, որոնք ձգտել են հիմնավորել աստվածների կամ Աստծո գոյությունը: Մարդը կրոնական էակ է, «որովհետեւ ուրտեղ որ մարդ եղած է եւ կայ՝հոն միեւնոյն ատեն կրօնք եղած է եւ կայ» (էջ 127). կրոնականությունը մարդկային հասարակությանը հատուկ եւ իր բնույթով միավորող (religio լատ.՝կապ, կապող) երեւույթ է (էջ 130): Կրոնի ծագման վերաբերյալ եղել են տարբեր՝բնապաշտական, ոգեպաշտական, ընկերաբանական տեսություններ, որոնք թերի են եւ լիովին չեն բացատրում կրոնականությունը: Կրոնական բոլոր համակարգերն էլ արծարծում են Աստծո գոյությանը, Աստված-մարդ հարաբերությանը, աստվածային կամքին, հոգու անմահությանը վերաբերող հարցեր: Կրոնականության ընդհանրական բնույթը մի ուրույն ճանապարհ է, որով ընթանալով՝ անդրանցնում ենք փիեզերքը եւ հայտնաբերում հավիտենական Կեցությանը: Հեղինակը նկատում է. «...ճշմարտութիւն մը կայ կրօնքին մէջ. այլապէս կրօնքը փիեզերական այդքան մեծ իրողութիւն մը պիտի չըլլար, որովհետեւ բան մը որ ճշմարիտին վրայ հիմնուած չէ չի կրնար փիեզերական ըլլալ» (էջ 135): Կրոնական համակարգերը կարող են տարբեր լինել, փոփոխվել, ժամանակի ընթացքում դադարել գոյություն ունենալուց, ինչպես օրինակ՝ ֆետիշիզմը, տոտեմիզմը, ոգեպաշտությունը, բազմաստվածությունը, սակայն կրոնի բովանդակությունը մնում է նույնը՝առարկայական իրականությունից անկախ եւ դրանից վեր գտնվող Է-ի գոյության ընդունումը: Կրոնը, կրոնականությունը մեզ ուղղորդում են Աստծո գոյության բացահայտմանը:

Հեղինակը Արարչի գոյության հիմնավորման ուղիներից է համարում նաեւ փիլիսոփայությունը եւ վերացական մտածողությունը. «Ինչպէ՞ս կ՚ըլլայ որ մեծ միտքերու փիլիսոփայութիւնները, տարբեր ժամանակներու, տարբեր ժողովուրդներու, եւ տարբեր միջավայրերու մէջ յառաջ եկած, տարբեր կերպերով եւ ճամբաներով ի վերջոյ աստուածութեան գաղափարի մը կու գան» (էջ 128): Օրինակ՝Պլատոնը փիեզերքը բացատրում է գաղափարներով կամ իդեաներով, որոնց աստիճանակարգության գագաթնակետին գերագույն իդեան է՝ Աստծո կամ գերագույն Բարիքի գաղափարը: Արիստոտելը, որը Պլատոնի աշակերտն էր, աշխարհը բացատրում էր «նյութի» եւ «ձեւի» միջոցով: Եղել են նշանավոր մտածողներ, որոնք ջանացել են հերքել Աստծո գոյությունը. նրանցից էր Սարտրը, որի աստվածմերժողությունը «Աստուծոյ գոյութեան եւ հաւատքին անհրաժեշտութիւնը ցոյց տալու կը ծառայէ. անաստուածութիւն մըն է որ մարդը Աստուծոյ հաւատքին կ՚առաջնորդէ: Ուրեմն Աստուծոյ գոյութիւնը ապացուցանել եթէ դժուար է, մերժել ա՛լ աւելի դժուար է եւ գրեթէ անկարելի» (էջ 140): Մինչդեռ Կանտն ընդունում էր Աստծո գոյությունը եւ նշում. «...բանականութիւնը միութեան յանգելու ձգտում մը ունի: Արտաքին աշխարհին մէջ նիւթն է այդ, մեր ներ-

քին աշխարհին մէջ՝ հոգին, եւ ասոնց միութիւնը՝ զիրենք անդրանցնող՝ Ասպուած» (էջ 141):

Ասպծո գոյության հիմնավորման հաջորդ ուղին կամ, այսպես կոչված, «Ասպծո հետքը», ըստ Շահան Պերպերյանի, մարդկային ներքին փորձառությունն է: Ուստի պետք է հետեւել որոշակի իրողությունների, որոնք ուղիներ են բացում մեր առջեւ. դրանցով ուղղորդվելով՝ անդրանցնում ենք իրերի աշխարհը, բացահայտում փիեզերական Մտքի գոյությունը:

Գիտական առաջընթացը հաստատեց, որ մարդկային բանականությունը կարող է թափանցել առարկայական իրականության խորքերը, բացահայտել երեւույթների ու իրերի էությունը: Աշխարհի կեցության ճանաչողությունը հանգեցնում է Ասպծո՝ որպես միասնության հիմքի գաղափարին: Արարչին կարող ենք ճանաչել արարչագործության միջոցով: Անսելմ Քենթրբերացին նշում է՝ մենք ի սկզբանե ունենք Ասպծո գաղափարը, եւ գոյությունը Ասպծո իսկությունն է, «հետեւաբար ըսել թէ Ասպուած է՝ ըսել է որ Է-ն Է՛, այսինքն՝ Ասպուած գոյ է» (էջ 143):

Ըստ Շահան Պերպերյանի՝ Ասպծո գոյության խնդրի լուծմանը պետք է հասնել օբյեկտիվ իրականության ճանաչողության միջոցով, այսինքն՝ աշխարհի, նրանում տեղ գտած երեւույթների եւ իրերի ճանաչողությամբ բխեցնել անդրգոյ, բացարձակ Կեցության գոյության անհրաժեշտությունը: Աշխարհը ժամանակի մեջ սկիզբ է ունեցել եւ արարվել, ստեղծվել է փիեզերական Մտքի կողմից, այնինչ՝ Ասպված ժամանակից դուրս է, ժամանակն է Նրա մեջ: Նույնը կարելի է ասել մարդկային հոգու մասին. մեր ապրած ժամանակը մեր հոգու մեջ է: Հոգին, փոփոխվող, անցնող ժամանակը իր մեջ պահելով, մնում է իբրեւ անփոփոխ, անանց էություն:

Ոգեկան Կեցությունն անպատճառ սկզբնապատճառն է, իսկ աշխարհը՝ հետեւանքը. արարչագործությունը վկայում է Արարչի մասին: Հավիտենական ***Է***-ի մասին են վկայում ինչպես ճանաչողության գործընթացի ոչ նյութական բնույթը, այնպես եւ հոգեւոր երեւույթների էությունը (էջ 77):

«Բնազանցութիւն» աշխատության մեջ հիշատակվում են նաեւ Ասպծո գոյությունը հիմնավորող թոմիստական կամ կաթոլիկյան «ապացույցները»: Այս «ապացույցները» խթանում են աստվածճանաչողությունը, քանի որ մատնանշում են այնպիսի իրողություններ, որոնք անհրաժեշտաբար ենթադրում են բացարձակ Կեցության գոյությունը: Շահան Պերպերյանի կարծիքով՝ Ասպծո գոյությունը բացահայտվում է փիեզերքի, աշխարհի, մեզ ընկալելի ու հասկանալի բնական երեւույթների, իրերի ճանաչողության եւ դիտարկման միջոցով: Աշխարհի կեցության ճանաչողության միջոցով բացահայտվում է արարչագործության միասնության հիմքը՝ Ասպված (էջ 142): Նյութական աշխարհի կառուցվածքը եւ նրանում առկա կարգավորվածությունը վկայում են արարող ու կարգավորող Մտքի մասին:

Գերագույն Կատարելության գոյությունը, ըստ Շահան Պերպերյանի, կարող ենք հիմնավորել նաեւ վախճանաբանության միջոցով: «Վախճան» բառը նրա համար ունի երկու իմաստ՝ նպատակ եւ վերջ, ավարտ: Ինչպես մարդը, այնպես եւ նյութական աշխարհի բոլոր տարրերն իրենց գոյությամբ ձգտում են որոշակի նպատակի: Իրերի աշխարհում ուղղակի կամ անուղղակի նկատվում է համընդհանուր նպատակայնություն, որն անհրաժեշտաբար ենթադրում է նպատակադիր Մտքի գոյությունը: Կյանքը ինքնին բարիք է, եւ այն առավել է իմաստավորվում, երբ զգում ենք Աստծո ներկայությունը: Ինչ վերաբերում է մարդկային կյանքի ավարտին, հեղինակը պնդում է, թե հոգին աննյութական գոյացություն է, հետեւաբար չի քայքայվում մարմնական մահվամբ. մահը քայքայում է նյութականն ու մարմնականը, բայց ոչ հոգեղենը (էջ 165): Արարչագործությունն է ինքնին վկայում իրերի աշխարհից վեր գտնվող, հավիտենական Է-ի մասին. «Աստուած իրաւ այդ անդրգո՛յն է որուն բացարձակ էութեան վրայ հաստատուած է բովանդակ տիեզերքը, բայց անդրգոյ մը որ տիեզերքի բոլոր կէտերուն վրայ ներկայ է, գերազանցօրէն եւ անհունօրէն բարձր քան տիեզերքը, բայց անոր բոլոր կէտերուն վրայ, որոնց հոգի կ՚ըսենք, մտերմօրէն ներկայ, անհունօրէն հեռու. միեւնոյն ատեն անհունօրէն մօտ» (էջ 155):